ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 1

*08 հունվար 2018թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2018 թվականի հունվարի 09-ին, ժամը 16:00-ին հրավիրել Ծաղկաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի անհրաժեշտությունից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  ԹԻՎ  2

*10 հունվար 2018թ.*

### ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 342 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի <<Առևտրի և սպասարկման ոլորտում ուսումնասիրություններ կատարելու հանձնարարագիր տալու մասին>> թիվ 342 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) <<ՀՀ>> բառը փոխարինել <<Հայաստանի Հանրապետություն>> բառերով,

2) <<25.12.2017թ.>> թվերը փոխարինել <<2017 թվականի դեկտեմբերի 25>> բառերով,

3) <<26.12.2017թ.>> թվերը փոխարինել <<2017 թվականի դեկտեմբերի 26>> բառերով,

4) <<27.12.2017թ.>> թվերը փոխարինել <<2017 թվականի դեկտեմբերի 27>> բառերով:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 3

*10 հունվար 2018թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 343 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հողի հարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 343 որոշման հղումների 3-րդ կետում <<45>> թիվը փոխարինել <<60>> թվով:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 4

*11 հունվար 2018թ.*

ԾՈՎԻՆԱՐ ՎԱԼՈԴՅԱՅԻ ԳՁՈՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Ծովինար Վալոդյայի Գզողյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N1494815, տրված 2005 թվականի սեպտեմբերի 2-ին) 0.085 հա ընդհանուր մակերեսով հողամասին և հողամասի վրա գտնվող շինություններին տրամադրել հասցե ՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց, թիվ 3:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ